

են Պոլիսի տպագրութիւն չին Հարանց վարքին յիշատակարանին և ուրիշ ձեռագիրքերու մէջ, ամէնն ալ սիրող Երուսաղէմին ու խաղաղութեան և ամէնն ալ սիրուած անոնցմէ:

Երուսաղէմի մէջ Գրիգոր Շղթայակիրի ու Պոլիսի մէջ Յովհաննէս Կոյրտի Պատրիարքութեան իբրև քսանընդ տարուան միջոցը՝ կ'երևի Արծաթ դար մը շինութեանց և ուսումնասիրութեանց, մինչ ամիրաներ, մահապաններ, աղաներ և ուսումնասէր վարդապետներ ու եպիսկոպոսներ՝ շուրջն առած այդ երկու ամլածիններուն՝ կառուցին իմացական բարեսիրական և աստուածսիրական շատ բաներ, ու տպագրեցին և թարգմանել տուին կրօնական ու պատմական շատ գիրքեր: Այդ արծաթ վարին ծաղկած են, ի մէջ այլոց, Ճամհուզատէ լեզուազէտ Յակոբ զպիրը՝ թարգման Շուէտի դեսպանին ի Պոլիս, որուն բարեկամն ալ էր Նալեան Յակոբ յաջորդ պատրիարքը. և անոր թարգմանել կուտար իր փափագած եւրոպական հեղինակները. նաեւ Կեսարացի Բարսեղ արքունի նկարիչն հռչակաւոր, որ քաջած է բարձր անձնաւորութեանց կենդանագիր պատկերները:

Ասոնցմէ հաջը կու գայ՝ Ճէվահիրճի Մաղաքիա Չէլէպին, ազգական Երեմիա Չէլէպիին և Սեղբոսեան Յովհաննէս Չէլէպի կամ մարգիզ՝ մատենագիր ամիրան, որ իտալերէն և հայերէն քանի մը հրատարակութեանց հետ ունի նաեւ գրած իտալական պատմութիւն մը և Տ. Կոմիտասի վրայ ծանօթութիւններ: Քիչ հոտքն է նաեւ՝ որ հետզհետէ կը ծաղկին Նալեան Յակոբ պատրիարքի խաղաղ օրերուն յառաջադէմ ամիրաներն ու արուեստապետները, որոնց վրայ կ'արժէ վատ գրել ուրիշ աւելի լայն պատեհով մը:

1. Բաղէշի Ամլորդուոյ վամքէն էիմ ամոմք, և գլխաւոր աշակերտմերը՝ վարդամ Բաղիշեցի մեծ վարդապետիմ: